

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 դեկտեմբերի 2000 թվականի N 902
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՀՄԱՆՈՎ ԸՍՏ ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 20 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետին, 38 և 42 հոդվածներին, 53 հոդվածի 3-րդ և 54 հոդվածի 4-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել՝

ա) «Արտահանում՝ ազատ շրջանառության համար», «Ժամանակավոր արտահանում», «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար», «Անմաքս առևտուր» մաքսային ռեժիմներով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) «Մեփականության իրավունքից հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ռեժիմով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

գ) «Ոչնչացում» մաքսային ռեժիմով հայաստանի հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի.

դ) «Բացթողում ներքին սպառման համար», «Անմաքս առևտուր», «Ժամանակավոր ներմուծում (ընդունում)՝ վերամշակման համար», «Ժամանակավոր ներմուծում (ընդունում)» և «Ոչնչացում» մաքսային ռեժիմներով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխման համար արգելվող ապրանքների ցանկը՝ համաձայն N 4 հավելվածի:

(1-ին կետը լրաց. 29.09.01 N 913, փոփ. 04.12.14 N 1369-Ն)

2. Սահմանել, որ՝

ա) Հայաստանի Հանրապետությունում հսկվող դեղերի և թմրանյութերի, միջուկային (ռադիոակտիվ) նյութերի Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխումն, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 44 (փայտանյութ և դրանից արտադրանք, փայտածուխ) խմբին դասվող ապրանքների (բացառությամբ 4405 00 000, 4412-4417, 4418 10, 4418 20, 4419 00, 4420, 4421 10 000, 4421 90 910 ծածկագրերին դասվող ապրանքների) արտահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հատուկ կարգով.

բ) պոռնոգրաֆիկ բովանդակության նյութերի համար, ապրանքներ տեղափոխող անձի համաձայնությամբ, կարող է կիրառվել միայն «Ոչնչացում» մաքսային ռեժիմը: Այլ մաքսային ռեժիմներով պոռնոգրաֆիկ բովանդակությամբ նյութերի՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխումն արգելվում է.

գ) «Բացթողում ներքին սպառման համար» մաքսային ռեժիմով արգելվում է ներմուծել ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 և 8705 ապրանքային դիրքերում դասակարգվող ավտոմեքենաներ (բացառությամբ 8702 90 90 և 8703 90 10 ծածկագրերին դասակարգվող ավտոմեքենաների), որոնց վրա տեղադրված չէ վնասակար արտանետումների չեզոքացուցիչ:

Սույն ենթակետում նշված ավտոմեքենաների վրա տեղադրված վնասակար արտանետումների չեզոքացուցիչների առկայության ստուգման կարգը սահմանում է վերադաս մաքսային մարմնի ղեկավարը:

(2-րդ կետը լրաց. 25.03.04 N 427-Ն, 07.03.07 N 373-Ն, 27.12.07 N 1548-Ն, փոփ. 12.11.09 N 1334-Ն, 04.12.14 N 1369-Ն)

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի դեկտեմբերի 6-ի «Մաքսային որոշ հարաբերությունների կարգավորման մասին» N 615 որոշման 8-րդ կետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2000 թվականի
դեկտեմբերի 31-ի N 902 որոշման

Ց Ա Ն Կ

**«ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ԱԶԱՏ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ», «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ԱՐՏԱՀԱՆՈՒՄ», «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ» ԵՎ «ԱՆՄԱՔՍ ԱՌԵՎՏՈՒՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՐԳԵԼՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
(ՎԵՐՆԱԳԻՐԸ ՓՈՓ. 04.12.14 N 1369-Ն)**

1. Պետական գաղտնիք պարունակող նյութեր
2. Հայաստանի Հանրապետությունում գրանցված ապրանքային նշաններով մակնշման ենթակա, սակայն չմակնշված ակտիվային խմիչքներ
3. Փայտանյութ (ծածկագրերն ըստ ԱՏԳ ԱԱ-ի՝ 4401 10 000, 4401 21 000, 4401 22 000, 4403, 4404) (հավելվածը խմբ. 31.03.01 N 265, լրաց. 15.10.09 N 1157-Ն, փոփ. 04.12.14 N 1369-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուրյան

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2000 թվականի
դեկտեմբերի 31-ի N 902 որոշման

Ց Ա Ն Կ

**«ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ՝ ՀՕԳՈՒՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ»
ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ
ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ**

1. Բոլոր տեսակի թափոններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարության դրական եզրակացության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության թույլտվության հիման վրա ներմուծվող թափոնների
2. Պիտանիության ժամկետն անցած ապրանքներ

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուրյան

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2000 թվականի
դեկտեմբերի 31-ի N 902 որոշման

Ց Ա Ն Կ

«ՈՉՆՉԱՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

1. Կենդանի կենդանիներ և բույսեր, եթե դրանք չեն հանդիսանում անբուժելի վարակի աղբյուրներ
2. Պատմական, մշակութային և հնագիտական արժեք ներկայացնող առարկաներ

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2000 թվականի
դեկտեմբերի 31-ի N 902 որոշման

Ց Ա Ն Կ

**«ԲԱՅԹՈՂՈՒՄ ՆԵՐՔԻՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ», «ԱՆՄԱՔՍ ԱՌԵՎՏՈՒՐ»,
«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ (ԸՆԴՈՒՆՈՒՄ)՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ»,
«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ (ԸՆԴՈՒՆՈՒՄ)» ԵՎ «ՈՉՆՉԱՑՈՒՄ»
ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ
ՄԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
(ՎԵՐՆԱԳԻՐԸ ՓՈՓ. 04.12.14 N 1369-Ն)**

1. (կեսն ուժը կորցրել է 11.02.16 N 137-Ն)
2. Ավտոմոբիլային բենզին, որի մեջ կապարի պարունակությունը գերազանցում է 0.013 գ/լ (ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի՝ 2710 12 510 և 2710 12 590):
3. Չյոդացված կերակրի աղ՝ սննդի մեջ օգտագործելու համար (ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի՝ 250100910):
4. (կեսն ուժը կորցրել է 07.03.07 N 373-Ն)
5. (կեսն ուժը կորցրել է 11.02.16 N 137-Ն)
6. «Կայուն օրգանական ադոտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի Ա և Բ հավելվածներում ներառված՝ ստորև նշված բույսերի պաշտպանության միջոցները

Անվանումը	CAS գրանցման համարը	ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը
Հավելված Ա		
լորին	309-00-2	2903 82 000 0 3808 50 000 9
լորդան	57-74-9	2903 82 000 0 3808 50 000 9
իեկորին	60-57-1	2910 40 000 0 3808 50 000 9
նորին	72-20-8	2910 90 000 0
բպտաբլոր	76-44-8	2903 82 000 0 3808 50 000 9
բքսաբլորբենզոլ	118-74-1	2903 92 000 0 3808 50 000 9
իրեքս	2385-85-5	2903 89 900 0 3808 91 200 0

Կամֆեքլոր (տոքսաֆեն)	8001-35-2	3808 50 000 9
Պոլիքլորացված դիֆենիլներ (ՊՔԴ), պոլիքլորացված բիֆենիլներ (ՊՔԲ)		2903 99 3824 82 000 0
Հավելված Բ		
ԴԴՏ (1-1-1 եռաքլոր-2,2-բիս(ո-քլորֆենիլ) էթան)	50-29-3	2903 92 000 0 3808 50 000 9

(հավելվածը լրաց. 29.09.01 N 913, 12.02.04 N 353-Ն, 03.03.05 N 220-Ն, փոփ. 07.03.07 N 373-Ն, 25.04.13 N 438-Ն, լրաց. 03.10.13 N 1079-Ն, փոփ., լրաց. 04.12.14 N 1369-Ն, փոփ. 11.02.16 N 137-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան